ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 456 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի N 564-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մայիսի 25-ի «Վարչապետի աշխատակազմի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 564-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ուժը կորցրած ճանաչել 37-րդ կետի 7-րդ ենթակետը.

2) 37-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15-րդ ենթակետով՝

«15) աջակցում է զորահավաքային նախապատրաստության և զորահավաքային ծրագրերի բաժնին՝ աշխատակազմում աշխատող պահեստազորայինների ամրագրման, նրանց զինվորական հաշվառման աշխատանքների իրականացմանը:».

3) ուժը կորցրած ճանաչել 43-րդ կետի 9-րդ և 16-րդ ենթակետերը.

4) 47-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4) իրականացնում է պաշտպանված էլեկտրոնային փոխանակման համակարգի շահագործման աշխատանքներ.».

5) 47-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ և 12-րդ ենթակետերով՝

«11) իրականացնում է գործնական և մեթոդաբանական աջակցություն գաղտնիության ռեժիմի ապահովմանն ուղղված աշխատանքների կազմակերպման հարցերում.

12) իրականացնում է «Պետական գաղտնիքի մասին» օրենքի և դրան համապատասխան ընդունված ենթաօրենսդրական իրավական ակտերի պահանջների գաղտնի ռեժիմն ապահովող ստորաբաժանումներին վերապահված լիազորությունների կատարումը:».

6) 51-րդ կետի 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«10) ապահովում է աշխատակազմում աշխատող պահեստազորայինների ամրագրման և նրանց զինվորական հաշվառման հետ կապված աշխատանքների իրականացումը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ